

Ատենազրույթիւն Ս.Շրրորդութիւն Հայց. Առաք.
Օկեղեցւոյ Տարեկան ծխական ժողովի-Յորոնթօ
30 Յունվ.1977

Ս.Շրրորդութիւն Հայց. Օկեղեցւոյ Տարեկան ծխական ժողովը գումարուեցաւ
սիրակի 30 Յունվ.1977-ին Կ.Ս. ժամը 4:20-ին Եկեղեցւոյս սրահին մէջ:

1- ժողովի բացումը կատարեց Գերշ.Տ.Արիս Եպիսկ.Շիրվանեանը աղօթքով:

2- Պատ. ծխական խորհուրդի Ատենապետ՝ Տիար Մինաս Սէլեան, ըստ Հայց.
Օկեղեցւոյ Ամերիկայի Արեւելեան Թէմի կանոնադրութեան թիւ 17 յօդ-
ուածին օրինական յայտարարեց ժողովը.-

ներկաներու թիւն էր 65 վաթսուն եւ հինգ:

3- Պատ. ծխական խորհուրդի Ատենապետի հրաւերով ձեռնարկուեցաւ օրուան
դիւանի ընտրութիւն:

Ընտրողական յանձնախումբի ներկայացուցած թեկնածուներու շուրջ ձե-
ռամբարձ քուէարկութեամբ, դիւանը կազմուեցաւ հետեւեալ ձեւով:-

Ատենապետ՝ Տիար Պարգեւ Խոճաճեան

Ատենադպիրներ Տեարք՝ Հրաչ Շիշմանեան եւ Սատաթ Բ.Մամուրեան

Յանուն օրուան դիւանին խօսք առաւ ատենապետ՝ Տիար Պարգեւ Խոճաճեանը,
որ շնորհակալութեան խօսքէ ետք խօստացաւ անաչառութեամբ վարել ժողովը
ի նպատակ համայնքիս: Ապա ընթացք տալով օրակարգի հարցերուն թելադրեց
ընդունիլ օրակարգի հարցերը ըստ հրաւերի: Տիար Գրիգոր Էլմասեան, առա-
ջարկեց.Յետ ձեռամբարձ քուէարկութեան օրակարգը նոյնութեամբ որդեգ-
րուեցաւ:

4- Օրուան դիւանի կողմէ առաջարկուեցաւ չկարդալ նախորդ 1976 թուի.Տարեկան
ծխականի ժողովի ատենազրույթիւնը քանի այդ ատենազրույթիւնը մաս կը կազ-
մեր կանխաւ պատրաստուած եւ բաժնուած թղթածրարին:

Տիար Հայկ Սէլեան,դիւանի ուշադրութեան յանձնեց որ թղթածրարին մէջ
միայն Հայերէն օրինակ կար ատենազրույթնէն. Դիւանը ընդունելով Տիար
Սէլեանի թելադրութիւնը վերատեսութեան ենթարկեց իր առաջարկը եւ ընթացք
տուաւ ատենազրույթեան ընթերցման:

Նախորդ ատենադպիր Տիար Սարգիս Տէքիրմէնճեանի բացակայութեան ատենա-
զրույթիւնը կարդաց ատենապետ Տիար Վարդան Վարդանեան:

Կատարուեցան հետեւեալ ճշդումները նախորդ 1976-ի ատենազրույթեան վրայ:

1)Տիար Խոճաճեան ժողովի ուշադրութեան բերաւ Տիար Եղուարդ Է՛օտէմիշլեանի
յայտատարութիւնը թէ ողբացեալ Տիկ.Փերուզ Պապայեանի կտակի հարցերու

կարգադրութիւնէն ետք ապարտնրը պիտի փոխանցուի Թորոնթօյի Ս.Շրրորդ. Հայց. Եկեղեցւոյ:

2) 1976 Տարեկան ծիսական ժողովի ատենադրութեան մէջ նշուած 9-ը ծիսական Խորհուրդի ընտրուած անդամներու փոխարէն կարողաւ առաջին 5-ը ընտրուած: Նոյնպէս պատգամաւորներու առաջին 4-ը:

5- Ջանց անուեցաւ Գերշ.Սրբազան Հօր տեղեկագրի ընթերցանութիւնը, քանի մաս կը կազմէր տեղեկագրերու թղթածրարին: Ներկաները հրաւիրուեցան կատարելու իրենց ակնարկութիւնները:

Առաջին հարցում:

Ներկայացուց Տիար Վարդան Վարդանեան (Ուր. Եւ երբ Սրբազան Հայրը իր վարած երկու՝ Առաջնորդ-Փոխանորդի եւ հոգեւոր Հովիւի պաշտօններուն մասին արտայայտուած է):

Սրբազանը պատասխանեց ըսելով յաճախ մասնաւորաբար ծիսական Մասնաւոր Ընդհ. Ժողովին Ուրբաթ 25 Ապրիլ 1975-ին (Տես 1975 Տարեկան Տեղեկագիրերու թղթածրար 6-րդ էջի աւարտին):

2-րդ հարցում:

Տիար Նշան Մանճրլըքեան հարց տուաւ թէ (ինչու Ապրիլեան նահատակներու յուշահանդէսը ձախողութեան մատնուած էր եւ որու պատճառաւ):

Ծիսական Խորհուրդի Ատենապետ Տիար Մինաս Սէլեան տեղեկացուց թէ արծարծուած էր Հովանաւորութեան հարց, Կաթողիկէ, Աւետարանական եւ Հ.Յ.Գ.-ի կողմէ: Իսկ Ռ.Ա.Կ.Եւ Հ.Բ.Ը.Մ. թիկունք կանգնած էին Ս.Շրրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ դիրքին:

Տորթ. Ալեանաք Թելադրեց հովանաւորութիւն քառը փոփել նահատակներու, յաշտ միասնականութիւն:

Գերշ. Արիս Եպիսկ. Շիրվանեան, սոստկօրէն հակադեմ այդ յայտարարութիւնը, ըսելով որ (Այոպէսով Ս.Շրրորդ. Հայց. Եկեղեցին հաւասար դիրքի վրայ կը դրուի այլ կազմակերպութիւններու հետ: Մեր տեսանկիւնէն դիտելով ընդունելի չէ, պատմական օրէն ալ իրողութիւն է որ Հայց. Եկեղեցին միշտ հովանաւորող եղած է):

3-րդ հարցում:

Տիար Անդրէաս Գալայմեան հարցուց թէ (Յուշատօնի աղընջութեամբ Հայ Աւետարանական Եկեղեցիէն նամակ ստացուած է իրենց մասնակցութեան կապակցութեամբ: Պատասխանը ծիսական էր):

4-րդ հարցում:

Տիար Կարօ Տէիրմէնճեան հարցուց թէ Գանատական կառավարութեան առջեւ ինչ կը ներկայացնենք:

Յանուն ծիսական Խորհուրդի Փոխ Ատենապետ՝ Տիար Հրանդ Սուին պատասխանեց ըսելով թէ- ծիսական Խորհուրդը կը ներկայացնէ Եկեղեցիս, ապա թէ նախընթաց ստեղծուած

է որ Ապրիլեան Յուշատօնը կը կատարուի Ս.Շրրորդ. Հայց. Եկեղեցւոյ հովանա-
ւորութեամբ: Ատիկայ կը փոխուի միայն երբ առեւտրային տարեկան ընդհանուր ժողո-
վը տարրեր (ուղեցոյց տայ) յանձնարարութիւն ընէ:

6- Թեմական Պատգամաւորներու տեղեկատուութիւնը նոյնութեամբ վաւերացուեցաւ:

7- Ժխական Խորհուրդի եւ յարակից մարմիններու գործունէութեանց տեղեկագրերու
վերաբերեալ սուր վստահատարաբար տարաբար տրուած թելադրութիւններ: Ամէն
մի կազմակերպութեան վերաբերեալ անջատաբար եղան նաեւ լուսաբանութիւն պա-
հանջող հարցումներ որոնք պատշաճօրէն պատասխանուեցան պատկան մարմիններու
առեւտրային տարրերու կամ պատուարժան ժխական Խորհուրդի անդամներուն կողմէ: Գոհու-
նակութիւն պատճառելով հարց տուողներուն:

Այս առթիւ եղան հետեւեալ թելադրութիւնները: -

- Ժխական Խորհուրդի, տեղեկագիրքը ըլլայ աւելի մանրամասնուած ցոյցներով համար
ժխական Խորհուրդի կատարած աշխատանքները. Զրաւական անփնջ միայն ձեռնարկ
ներու թուականներ տալով, այլ անդրադարձանք անոնց ընդմիջեալ եւ գտած հաղոր-
դականութեան մասին:
- Ցեռ օրինական հարցերու կարգադրութեան, ժխական Խորհուրդը զբաղի Ողբ. Պօղոս
սվաճեանի կտակի, եկեղեցւոյս բաժնի հետապնդման եւ փոխանցման հարցով:
- ,,կայանէ,, պարախումբը բազմացնէ իր ելոյթները ի համոթիւն գաղութիս եւ
արդարացնելու համար անոր եղած նիւթական յատկացումները:
- Ժխական Խորհուրդը յետ այսու մասնաւոր ուշադրութեամբ ըննելու է որեւէ
տպագրութիւն կամ գրութիւն, ուր եկեղեցիս մասնակցութիւն ունի, որպէսզի
վիպումներ չկատարուին, ինչպիսին Օնթարիօ Սայնս Սէնթրի մէջ կայացած ցու-
ցահանդէսի զրքոյկին մէջ մոռացութեամբ յիշատակութիւն եղած չէր Ս. Էջմիածնի
մասին:
- Եկեղեցւոյ Ս. Խորանի ետի պատը ենթարկուի մարտարապետական ըննութեան եւ
կատարուի անհրաժեշտ շինարարական աշխատանքները:
- Նոր Սերունդ ամսաթերթի ձեւը փոխել Լրատու Թերթիկ-ի եկեղեցւոյ յարակից
մարմինները ունենան իրենց թղթակիցները եւ յօդուածներով իրենց մասնակ-
ցութիւնը բերեն պարունակութեան, ապա կազմուի վարչութիւն մը զբաղելու
համար կազմակերպչական հարցով միայն:
- Կիրակնօրեայ վարժարանը գործադրէ եւ գործածութեան ղնէ նիւ Ծօրքի Առաջ-
նորդարանի կողմէ պատրաստուած ծրագիրները, եւ դասաւանդութեան միջոցները:
- 8- Նոյնութեամբ վաւերացուեցաւ 1976-ի իրականացած ելիւմտական տեղեկատուութ-
իւնը եւ 1977-ի տարւոյ նախահաշիւ պիւտճէն, յիտ լուսաբանութեան:

9- Հաշուեքննիչ յանձնախումբի տեղեկագիրը կարդաց Տիար Արամ Զուլճեան: Ապա ան աւելցուց թէ յանձնախումբը քննած չէր Տարեց Քաղաքացիներու հաշիւները որովհետեւ անոնք տրամադրելի չէին: Տիկ. Սիրուն Համալճեան տեղեկացուց թէ Տարեց Քաղաքացիներու հաշուեկշիռը տեղեկագրին մէջ երեւցած է եւ թէ արդէն իրենց հաշիւները պետական պատկան մարմիններու կողմէ քննուած են: Յանձնարարելէ հար որ հաշուեքննիչ յանձնախումբը կրկին անգամ ձեռնարկէ քննելու Ս.Սահակ եւ Ս.Միսրոպ վարժարանի 1975 տարեշրջանի նիւթական հաշուետուութիւնը ըստ նախորդ Յունվ.25,1976-ի Տարեկան Անդհ. ժողովի տրամադրութեան:

Մեծամասնութեան ձեռամբարձ քուէարկութեամբ որդեգրուեցաւ հաշուեքննիչ յանձնախումբի տեղեկագիրը:

10- Ճանուն ընտրողական յանձնախումբի թեկնածուներու մասին յաւելեալ տեղեկութիւններ տուաւ Տիար Սարտիկ Փփազեանը ներկայացնելով թեկնածուները, որոնք տրամադրութիւն յայտնած էին մասնակցելու եկեղեցւոյ ծխական խորհուրդին, հաշուեքննիչ յանձնախումբին եւ ընտրողական յանձնախումբին:

Տիար Յակոբ Օքրանոսեան դիտել տուաւ թէ ընտրողական յանձնախումբը ծխական խորհուրդի համար միայն 5 ընտրելիներ ունեցած է երբ ներկայ ծխական խորհուրդի անդամներէն Տիար Եղուարդ Էօտէմիշլեան 8 ամիսներէ ի վեր հիւանդ է եւ անկարող մասնակցելու ծխականի աշխատանքներուն որպէս անդամ մը այդ կազմին:

Վերոյիշեալ արտայայտութիւնի ընդունուեցաւ սաստիկ զայրոյթով, ներկաներուն կողմէ: Դիւանս անպատշաճ ու անփափկանկատ գտաւ Տիար Յակոբ Օքրանոսեանի այդ յայտարարութիւնը: Անոր ուշադրութեան յանձնելով որ նման յայտարարութիւններ ընելէ առաջ ստուգէ իր տեղեկութիւնները, ուստի Տիար Եղուարդ Էօտէմիշլեան միայն շուկ.76-էն ի վեր է որ հիւանդ է, ու ապագինման շրջան մը կանցնէ, հետեւաբար ալ ունի բանաւոր սրտնստ շմասնակցելու ծխականի աշխատանքներուն ըստ ծրագիր կանոնագրի թիւ 29 յօդուածին (էջ 24):

Օրուան դիւանի դիւանի թիւադրանքով հետեւեալները նշանակուեցան որպէս օրուան քուէահոյգեր. -Տեարք Բ.Ամբակումեան, Գէրիմ Գէրիմ, Ստեփան Ալմէրճեան, Եղուարդ Տէօվլէթեան, սակար Արթինեան, Հէրի Ամբակումեան, Արմէն Աճէմեան, Յարութիւն Աֆարեան:

11- ծխական խորհուրդի դիւանի յայտարարութենէն ետք որ այժմ ներկաներու թիւը 109-է, հետեւաբար ալ քուէարկելու իրաւասութիւն կունենային նոյն թիւով տրատու անդամներ, առ այդ ձեռնարկուեցաւ գաղտնի քուէարկութեան յատուկ քուէաթուղթերու վրայ:

Քուլտուրային և արհեստագործական հաստիքային ծախսերի մասին

Ընտրողական Ցանձնախույժը:-

1- Օրեցեան ժիրայր	96 քուլէ
2- Պալթայեան Ալեքսան	92 քուլէ
3- Փափազեան Մարտիկ	86 քուլէ
4- Յոբեան Թազուր	78 քուլէ
5- Գուլյումեան Սարգիս	76 քուլէ
6- Մուշեան Պետրոս	42 քուլէ
7- Թընկըր Վահէ	30 քուլէ

Նորընտիր անդամները քուլէներու առաւելութեամբ վերոյիշեալ առաջին հինգ անուններն են:

Հաշուեքննիչ Ցանձնախույժը:

Ժողովիս հաղորդուեցաւ թէ Թեկնածու Տիար Արմենակ Սարգսիան հիւանդութեան և Տիար Արամ Չուլճեան անձնական պատճառներով կը ինդիէին Թեկնածուութիւնը ջնջել, գոր կատարուեցաւ:

Առաջարկուեցաւ, եւ յետ երկրորդուելու նկատի առնուեցաւ Տիար Արմէն Քիւրքմեանի Թեկնածուութիւնը:

Միաձայնութեամբ հաշուեքննիչ յանձնախույժի անդամներն որոշուեցան:-

Տեարք՝ Լեւոն Նազրմեան, Մարտիկ Հէքիմեան, Արմէն Քիւրքմեան:

Ժխական Խորհուրդ:

Թեկնածու Տիար Ռուտուֆ Չարքմի խնդրեց դիւանէն իր Թեկնածուութիւնը ջնջել գոր կատարուեցաւ:

Նորընտիր ժխական Խորհուրդի ամբողջացուցիչ անդամները քուլէներու առաւելութեամբ հետեւեալ առաջին հինգ անուններն են:-

1.- Օրեցեան Ցակոր	83 քուլէ
2.- Արթինեան Հէրի	81 քուլէ
3.- Պօյաճեան Հրաչ	69 քուլէ
4.- Խաչայեան Կարօ	66 քուլէ
5.- Գուլյումեան Խաչիկ	59 քուլէ
6.- Տաքէսեան Տիգրան	44 քուլէ
7.- Մատթ Բ. Մամուրեան	36 քուլէ
8.- Մերաս Սկրտիչ	25 քուլէ
9.- Սարափեան Եղուարդ	22 քուլէ
10.- Խոսրովեան Ղեւոնդ	20 քուլէ

45 վայրկեան տեւող դադարէ մը ետք, որուն ընթացքին ներկաները հիւրասիրուեցան եկեղեցւոյ Տիկնանց Միութեան կողմէ պատրաստուած անուշիղէններով:

12-նոր չարգը: ներկաները միաձայնութեամբ մասնաւոր գնահատանքի խօսքերով արտայայտուեցան եկեղեցւոյ Տիկնանց Միութեան վարչութեան տարած ժրջան աշխատանքին համար որոնց շնորհիւ ալ կարելի եղած էր 11 հազար տոլարի յատկացու մը կատարել ծիական հորհուրդին: Դիւանը աւելցուց նաեւ միւս յանձնախումբերու տարած աշխատանքները, զոր ընդունուեցաւ ներկաներու գնահատանքի ծափահառութիւններով:

Հոգեւոր Հովիւի չարգ:-

Գերշ. Արիս Եպիսկ. Երվանեանի տեղեկագրին մէջ յիշուած հոգեւոր հովիւ մը ունենալու հարցը ընդունուեցաւ խիստ ուշադրութեամբ, ու տրուած լուսաբանութիւններէն ի յայտ եկաւ որ Արեւելեան թեմի պատգամաւորական ժողովը ֆիւտելֆիոյ մէջ մերժած է յատկացնել 20 հազար տոլարի գումար մը, պատուակելով նիւթական անկարողութիւն. ,ապա Առաջնորդ Սրբազան Թորոմ Արքեպս. Մանուկեանի լուսաբանութեան Դեկտ. 16, 1976-ի նամակը ուր բոլորովին անտեսուած էր հոգեւոր հովիւի հարցը այլ կը յանձնարարէր Արիս Եպիսկ. Երվանեանի կատարել իրեն վստահուած զոյք պաշտօնները, Թորոնթօյի հոգեւոր հովիւի եւ Առաջնորդի փոխանորդ Գանատայի մէջ:

Եղան բնագծով թելադրութիւններ, որ վերջապէս կաղապարուեցաւ առաջարկի մը բանաձեւի Տիար Կարօ Գաւուրեանի կողմէ որ յետ բարեփոխութեան, եւ երկրորդութեւն արժանացաւ մեծամասնութեան ձեռամբարձ բուէին:

Առաջարկի բանաձեւը հետեւեալն է: (Նկատի ունենալով որ այս գաղութը Ս. Երրորդ. Հայց. Եկեղեցին իր հոգեւոր հովիւը պէտք է ունենայ անմիջականօրէն, Անդամական Տարեկան Ընդհ. Ժողովս կառաջարկէ որ Ս. Երրորդ. Հայց. Եկեղեցւոյ ծիական հորհուրդը, Արեւելեան թեմի Առաջնորդարանին ի նիւ Եօրք, բողոքագիր ներկայացնէ, յայտնելով որ որքան ատեն որ Գանատան անկախ թեմ չունի, նիւ Եօրքի Առաջնորդարանի Փոխ Առաջնորդներու յատկացումը պէտք է հայթայթուի նիւ Եօրքի կողմէ, ինչպէս որ հղած էր անցեալին):

Նման բանաձեւով բողոքագիր ներկայացնելու առաջարկը, յանուն Գանատայի բոլոր ծուխերուն; մերժուեցաւ յետ շերկորդութեւն:

Ժողովիս հասկացողութիւնն է որ փոխ Առաջնորդի հանգամանքի ի նպաստ եղած յատկացում մը նիւ Եօրքի Առաջնորդարանի կողմէ պիտի սատարէ Թորոնթօյի մէջ Հոգեւոր Հովիւ մը ունենալու ծրագրին, առանց աւելի ծանրաբեռնելու ծուխիս ներկայ նիւթական պարտաւորութիւնները:

Հ. Ծ. Ե. Կ. Ա. -ի հարց:

Հ. Ծ. Ե. Կ. Ա-ի երեց եւ կրտսեր մասնամիւղերու կատարած գործունէութեան մասին եղած դիտողութիւնները ծնունդ տուին առաջարկի բանաձեւի մը Տիար Կարդան Կարդանեանի կողմէ որ յետ բարեփոխութեան եւ երկրորդութեւն արժանացաւ մեծամասնութեան ձեռամբարձ բուէին:

Առաջարկի բանաձեւը հետեւեալն է (կառաջարկեմ Պատ. Ընդհ. Ժողովէն կազմել նուա-

զագոյն 5 հոգինոց յանձնախումբ մը կազմուած Ս.Նրրորդ. Հայց.Օկեղեցւոյ ան-
դամներէն, որ ծրագիր մը կազմէն միամեայ աշխատանքի մը, միասնաբար Հ.Յ.Ծ.Կ.Ա.
վարչութեան եւ ծխական խորհուրդի ու ծխական խորհուրդի նիւթական օժանդակութեամբ
իրագործել նրիտասարդաց յայտագիր մը, մեր զաւակները այս յարկին տակ
միատեղ հաւաքելու եւ հայեցի եւ սիրալիր մթնոլորտի մը մէջ զիրենք Հայ
մեծցնելու):

Ներկայ անդամներէն հետեւեալ կամաւորները փափաք յայտնեցին իրենց մասնակցութիւնը
բերելու նման յանձնախումբի մը: Տիկ. Ալիս Սէլեան, Տիկ. Սիւզան, Սանկոյեան,
Տեարք՝ Արմէն Քիւրքճեան, Վարդան Վարդանեան, Թորգոմ Զապունեան,
Վահէ Քընկըր, Սարգիս Գուլումճեան, Մուշեղ Շահնազար:

Անդամարշաւի Հարց:

Անդամարշաւի յանձնախումբի գրուոր տեղեկագիրը որ առնին կարողացուած էր,
աւելի ուշով քննարկուեցաւ, հոն յիշուած թելադրութիւններուն եւ առջարկ-
ներուն պատճառաւ: Ցանձնախումբը կառաջարկեր (մարդահամարի յանձնախումբ) կազմել
լիագործիչով զայն հարկ եղած ծրագրային աշխատանքը տանելու, ու կը պայմանա-
ւորէր այս առջարկներու մերժումը յանձնախումբի հրաժարումով:

Անդամական Ընդհ. Ժողովս անհամաձայն գտնուելով անդամարշաւի յանձնախումբի
կիրարկումի միջոցներուն, մեծամասնութեամբ բուէարկեց մերժել ներկայացուցած
առջարկները, յանձնարարելով ծխական խորհուրդին նշանակել անդամարշաւի նոր
յանձնախումբ մը:

Քարավան 1977

Ծխական խորհուրդի առնապետի տեղեկագրին մէջ յիշուած էր այս մասին, ուստի
ներկաներուն յաւելեալ տեղեկութիւններ տրուեցան ծխական խորհուրդի եւ Գերշ.
Սրբազան Հօր կողմէ:

Մասնաւոր վիճաբանութեան առարկայ դարձաւ տաղաւարի անունի ընտրութիւնը, ու
երբ զազաթնակէտին հասած էր, Սրբազան Հայրը տեղեկացուց թէ արդէն անունը
որոշուած է ու կազմակերպիչներու պատկան մարմինն հաղորդուած է որպէս
(Սեւան) ներկաները հրճուանքով ընդունեցին այդ յայտարարութիւնը:

Օկեղեցւոյ ընդարձակման Հարց:

Տիար Կ. Տէիրմէնճեան առջարկեց փոխան օկեղեցւոյ ընդարձակման ծրագիրներ
մշակելու քաղաքիս Հ.Բ.Ը.Մ-ի նախ օժանդակէ որպէսզի ակումբ մը հաստատուի,
որովհետեւ ակումբ մը ունենալ շատ աւելի կենսական է քան օկեղեցի:


Իսկ քան բուէարկութեան դիւանս ներկաներու ուշադրութեան յանձնեց որ ծխ-
կան խորհուրդը արդէն նշանակած է յանձնախումբ մը վերոյիշեալ հարցով զբա-
ղելու համար, եւ մօտ ապագային մասնաւոր ծխական ժողովի պիտի հրաւիրուի եւ
աւելի պատշաճ է այդ հարցը այնտեղ քննարկել:

Առաջարկը հրկրորդուեցաւ, եւ յետ քուէարկութեան մերժուեցաւ:
13-Ապտոսծ ըլլալով օրակարգի բոլոր հարցերը, խօսք տուաւ նախագահ Սրբազան Հայրը որ նախ շնորհակալութիւն յայտնեց օրուայ դիւանին, շնորհաւորեց ծխականի նոր-ընտիր անդամներուն յուսալով որ նոր աւիշ մը պիտի մտցնեն եկեղեցւոյս առօրեայ կեանքէն ներս: Հաստատեց հոգեւոր հովիւ մը ունենալու կարեւորութիւնը եւ իր տրամադրութիւնը աւելի ժամանակ յատկացնելու եկեղեցւոյ գործերուն: Յանուն ^{օրուայ} դիւանի, առենապետի շնորհակալութեան եւ ներկաներու օրինապահութեան եւ համբերութեան ոգիին գնահատանքի խօսքերէն ետք ու ճէրունական աղօթքի յոռնկայս երգեցողութեամբ, ժողովը փակուեցաւ երեկոյեան ժամը 10:10-ին:


Ի Դիմաց


Ս.Շրրորդ. Հայց. Եկեղեցւոյ
Տարեկան Ծխական Ժողովի Դիւանի

Ատենադպիր՝

Հրաչ Եիշմանեան

Մատաթ Բ. Մամուրեան

Ատենապետ՝

Պարգել Խոճաճեան




23 Փետրուար 1977

